

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

«Տյունիքի մարզի «Միսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ «Միսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի Անգեղակոթ բնակավայրի գործող խմբի նախադպրոցական ուսումնական հաստատության մեթոդիստի՝ նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի ուսումնական գծով տեղակալի թափուր պաշտոնի համար՝ 0,5 դրույքաչափով:

Մրցույթին կարող է մասնակցել հաստատության տվյալ թափուր պաշտոնին Կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N 416-Ն հրամանով սահմանված տարիֆաորակավորման պահանջներին համապատասխանող անձր: <https://escs.am/am/news/4652>

Մրցույթի համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

- 1) դիմում (Ձև 1).
- 2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
- 3) անձը հաստատող փաստաթուղթ.
- 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
- 5) ինքնակենսագրություն (Ձև 4).
- 6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.
- 7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
- 8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.
- 9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթն անց է կացվելու **2023թ. փետրվարի 9-ին՝ ժամը 10:30-ին**, ք. Միսիան, Միսական 17 հասցեում:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով: Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 8.30-ից մինչև 17:30-ը, բացի շաբաթ, կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետը մինչև **2023թ. փետրվարի 3-ը, ժամը 17:30-ը**:

Մրցույթն անց է կացվելու 2 փուլով՝ գրավոր և բանավոր:

Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝

<https://escs.am/am/news/11978>

Տեղեկությունների համար զանգահարել՝ 028323280 հեռախոսահամարին կամ այցելել «Միսիանի համայնքի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ: